



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Դ. ԽԱԼՍԹՅԱՆ

**ԹԹԱՍՏԱՆՆԵՐԻ
ՄՃԱԿՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԲԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933**

550x1

պրն Զարգ
Գ. ԽԱԼԱԹՅԱՆ

**ԹԹԱՍՏԱՆՆԵՐԻ
ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ**

18037
A II
23984



**ԳՅՈՒՂԱՏՆՑԵՍԱԿԱՆ ԿՐԱՏԵԼԵԿՁՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933**

Պետերատի տպարան
Գլավկոտ № 8929(բ)
Պատվ. № 8063
Տիր. 2000



Սրբապետ՝ Ս. ՀԱՆՈՐՅԱՆ և Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Խ. Ա. Հ. Միության գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման զուգընթաց, տնտեսականությունն ու քրագործությունը, վերադառնալով գյուղատնտեսության նյութերից մեկը, նույնպես վերակառուցվել է յեվ նույնպես ընթանում է սոցիալիստական ուղիներով՝ կառուցելով խորհրդային տնտեսություններ յեվ կոլեկտիվ խոտոր տնտեսություններ:

Շեռամի գաղման ու կրկնակի կերակրումները, քրագործության յեվ տնտեսականության կոլտնտեսությունների յեվ խորհրդատնտեսությունների տարեց-տարի առավել չափով աճումն ու ամրապնդումը, մեքենայացման աշխատանքների յայն կիրառումը քրագործության մեջ, այս բոլորը յայն ներառություններ են յայս տնտեսականությունը յեվ քրագործությունը դարձնելու վո՛չ թե մի ոժանդակ նյութ սոցիալիստական գյուղատնտեսության մեջ, այլ, ընդհանրապէս, վորո՞ւ Երջանների յեվ յենթաԵրջանների համար՝ առաջնակարգ կոլտնտես: Համ. Կ. (բ.) Կ. Կենսկումը զսնում է, վոր Անդրկովկասի հետագա ինդուստրացման գործում աճնաժեշտ է կենսաբանալ բամբակագործության յեվ տնտեսականությունն հետագա ընդարձակման ու այդ բազայի վրա տնտեսիլ արդյունաբերության ծավալման վրա: Այսպես է աւելած Համ. Կ. (բ.) Կ. Կենսկումի հոկտեմբերի 31-ի վորոժման մեջ:

Այդ վորոժումը հաջող կերպով կենսագործելու, յեվ ժող. տնտ. այդ նյութն արագ կերպով զարգացնելու համար, մեր կոլտնտեսականներն ու չ՛աւոր-միջակ մաստերներ յալ ծանօթ պետք է յինեն քրեմու յսնամիքն ու նրա ոգագործմանը, վորպեսզի կարողանան քրեմուց առավելագույն չափով ոգսկիլ:

I. ԹԹՆՆԻՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Թթննին շատ արդյունավետ բույս է։ Նրա շնորհիվ զարգանում է վոչ միայն ժողովրդական տնտեսության մի ճյուղը—շերամապահությունն ու մետաքսի արդյունաբերությունը, այլև զարկ է տրվում անասնապահությանը, տեքստիլ գործին և թղթի արդյունաբերությանը։

Սիլոս. — Թթննու տերևները բացի վերպես շերամի կեր ոգտագործելուց, ոգտագործում են և սիլոսի համար։ Աշնանը հալաքած տերևները կարելի չէ սիլոսացման յեղթարկել։ Մեկ հեկտար թթային թթաստանից ստացվում է մոտ 12—15 տոնն տերև սիլոսի համար։ Այդքան սիլոսը բավական կլինի 4—5 զուլի անասունների ձմեռան կերի համար։

Յեթե հաշվենք ամբողջ Միության մեջ գտնվող թփային թթաստանների տարածությունները, ապա պարզ կլինի, թե ինչ մեծ քանակությամբ սիլոս կստացվի։

Թուղթ. — Բացի վերոհիշյալներից, թթննու բնագույտից ստացվում է բարձրորակ թուղթ։

Այսպիսով խորհրդարկն և կոչիկտիվ տնտեսություններն ունենալով թփային թթաստաններ, վոչ միայն զարկ են տալիս շերամապահության, այլև թղթի ու տեքստիլ արդյունաբերության և անասնապահության, դրա հետ միասին բարձրացնելով իրենց տնտեսության չեկամուտը և իջեցնելով մետաքսի ինքնարժեքը։

II. ԹԹՆՆԻՆ ՅԵՎ ԹԹԱՍԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Շերամի միակ կերը թթննու տերևն է։ Բարձրաբույն թթննին շատ լիկար է ապրում։ Ազատ աճեցողության պայմաններում նա կարող է ապրել 200—300 տարի։ Բայց վորովհետև թթննին ամեն տարի կտրում են, վորդերին կերակրելու համար քաղում են տերևները, նրա կյանքի տևողությունը պակսում է և ապրում է հազիվ 50—60 տարի, իսկ վատ խնամքի դեպքում՝ ավելի պակաս։

Վորպեսզի կարողանանք թթննուց շատ և լավորակ տերևներ ստանալ, պետք է գիտենալ նրան խնամելու և մշակելու ձևը։

Թթննինները մշակում են միջանի ձևերով։

Բարձրագույն քրեակ. — Բարձրագույն թիկնու զոտարից բարձր
ե լինում 1,50 մետրից մինչև 2 մետր: Շառերը կարելի չէ տնկել իրարից
4—5 մետր հեռավորության վրա: Բերքատվութունը սկսվում է 7—8 տա-
րուց հետո, այսինքն՝ զագաթին վերջնական ձևավորում տալուց հետո:
Միջակ բույն ունեցող քրեակ. — Միջակ բույն ունեցող թիկ-
նիների բույնը զետնից լինում է 70 սմ. — 1 մետր բարձրության վրա:
Տնկիները տնկում են 3—4 մետր հեռավորության վրա: Բերքատվու-
թյունը սկսվում է 3—4 տարուց հետո:

Ցածրաբույն քրեակներ. — Ցածրաբույն թիկնու բույնը զետնից
լինում է 30—50 սմ. բարձրության վրա: Տնկում են 2 մետր հեռա-
վորության վրա: Բերքատվությունն սկսվում է 2-րդ տարվանից:

Թփայլի քրեակ. — Դնի բարձրությունը 10 սմ. է: Մեկ հեկտարին
տնկում են 10,000 տունկ, շարքը-շարքից 2 մետր, տունկը-տունկից
0,5 մետր հեռավորության վրա: Ոգտագործում են տնկելու յերկրորդ
տարին:

Համաձայն թիկնիների այս ձևերի, թիկաստաններն ել կոչվում
են բարձրաբույն, միջակբույն, ցածրաբույն յիլ թփայլի քրասաններ:

Կանգ չառնելով միջակբույն և ցածրաբույն թիկնու տնկարանների
վրա, մանրամասնորեն կխոսենք թփայլի և բարձրաբույն թիկաստան-
ների մասին:

III. ԹՓԱՅԻՆ ԹՓԱՍՏԱՆ. ՆՐԱ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոցիալիստական շերամապահություն զարգացման արագ տեմպը
մեզնից մեծ քանակությամբ հուժքի բազա — թիկնու տերև և պահան-
ջում:

Բարձրաբույն թիկնիներին ձև տալու և նրանցից բերք ստանալու
համար պահանջվում է առնվազն 6—7 տարի, վերջից հետո միայն հնա-
քավոր և ոգտագործել նրանց տերևը կերել համար:

Ինչպես տեսնում ենք, բարձրաբույն թիկնիների զարգացման
տեմպն ընթանում է դանդաղ, վերջ չի կարող համապատասխանել ժա-
մանակակից շերամապահության զարգացման տեմպերին:

Թփայլին՝ ախտեմի թիկաստանի խոշոր առավելություններից մեկն
եւ այն է, վեր աճեցնելու և ձև տալու համար տարիներ չեն պահանջ-
վում, — տնկելու յերկրորդ տարին տերևներն արդեն ոգտագործվում են:

Ինչպես հետազոտում ցույց կտանք, բարձրաբույն սխտեմի թփաս-
տանից ստացվող բերքի քանակը ըստականին քիչ և 12 տարեկան
բարձրաբույն սխտեմի թիկաստանից միջին հաշվով ստացվում է այն-
քան տերև, վերջապես թփայլին սխտեմի թիկաստանը միայն հինգերորդ
տարում է տալիս:

1. ԹԹԱՍՏԱՆԻ ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

Թփային թթաստանին հատկացված հողը պետք է լինի թեթե, փխրուն և պարարտ, հողամասը լավ լուսավորված, արևոտ և վոռեղման համար առատ ջուր պետք է ունենա: Թթենին սիրում է չեքմու-թյուն և լույս:

Յեթե թթենին անեցնում են փափուկ, սննդանյութերով հարուստ և լավ լուսավորված հողում, նա արագ աճում է և կարճ ժամանակամիջոցում լավորակ ու շատ տերև է տալիս:

Սննդանյութերով աղքատ և ուժասպառ լիցած հողում տնկած թթենու տերևի թե վերակն է վատ լինում և թե քանակը քիչ: Թթաստանին հատկացվող հողերը պետք է հարուստ լինեն ազոտով, ֆոսֆորով, կալիով և այլ սննդանյութերով:

Ամենահարմար հողեր համարվում են թեթև հողերը—ավազակավային, կավավազային և փտանյութերով հարուստ հողերը:

Լավ է, յեթե հողամասի յենթահողը կավային է: Զուտ կավային և ավազային հողերում թթենիները լավ չեն աճում, և տերևները վատորակ են լինում: Թթաստանին նման հողեր հատկացնելու դեպքում, անպայման պետք է հողը պարարտացնել գոմաղբով, վորպեսզի ծառը հնարավորություն ունենա սնվելու և զարգանալու:

Մինչև թթենիներ տնկելը, պետք է ստուգել և պարզել՝ հողամասը վարակված չէ՞ արմատի փտախտով: Յեթե վարակված է, ապա առնվազն 3 տարի այդ հողամասում թթենիներ չպետք է տնկել, այլ ցանել սիսն հացահատիկային բույսեր, հակառակ դեպքում թթենիները վարակվելով արմատի փտախտով՝ կարճ ժամանակամիջոցում կվռչնչանան:

Հողամասն ընտրելիս, պետք է նկատի ունենալ թթաստանն ընդարձակելու հնարավորությունները, ուստի պետք է ընտրել այնպիսի տեղ, վոր հետադայում թթաստանի ընդարձակումը հնարավոր լինի: Յեթե թթաստանին հատկացված է այնպիսի հողամաս, վոր ուրիշ կուլտուրաների համար անպետք է, այդ դեպքում հողամասը պետք է կանոնավոր մշակել և պարարտացնել:

Այս բոլորը վերաբերում է թե թփային և թե բարձրարուն թթաստաններին:

Թփային թթաստանին հատկացրած հողը աշնանը, նայած վարելահողի շերտի հաստությունը, պետք է վերել 20—30 սմ. խորությամբ:

Հողն աշնանը վարելով սղը, շերտությունն ու խոնավությունը ազատ թափանցում են հողի ներքին շերտերը, քայքայվում են

որդանական նյութերը և վեր են տնջում աշխարհի հանքային նյութերի, վորոնք բուսերի սննդառության համար ամենակարևոր նյութերն են։ Որդանական նյութերը քայքայվելով՝ մարսելի և ընդունելի լին դառնում բուսի համար, յուրացվում են։ Հոգն աշնանը վարելու ժամանակ արմատախիլ են արվում մոլախոտերը, նրանց արմատներն ու կոճղարմատները դուրս ընկնելով հողի յերեսը՝ ցրտահարվում են, չորանում և հետագայում քայքայվում։ Ուրեմն, աշնան վարը նպաստում է թե՛ խոնավության կուտակմանը և թե՛ բուսական մնացորդների քայքայմանը, Վորի հետևանքով բարձրանում և հողի բերրիությունը։

Գարնանը, ձյունը հալվելուց հետո, յերբ հողը քեշի չե գլխա, նորից պետք է կրկնավարել, բայց այս անգամ արդեն յերեսանց՝ 15—20 սմ.։

Գարնան վարի նպատակն է՝ հողը նորից փխրացնել, նոր ծլած մոլախոտերն արմատախիլ անել և վոշնչացնել, հողի վարելուց առաջացած խոշոր կոշտերը մանրելու և մոլախոտերի մնացորդները դաշտից դուրս հանելու համար անհրաժեշտ ե փոցխել դիզ-դազ փոցխով։

2. ՏՆԿԻՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԻ

Մինչև տնկելը, թթնինները պետք է տեսակավորման չենթարկել և յուրաքանչյուր տեսակը տնկել առանձին-առանձին։

Տնկարանից սաացված միամյա տնկիները բաժանվում են չերեք տեսակի։

Առաջին տեսակը՝ 50 սմ. և ավելի բարձր, չերկրորդ տեսակը՝ 25—50 սմ., իսկ 25-ից ցածրը համարվում է թթատանի համար անպետք և մի տարի չել պետք է թողնել տնկարանում՝ մեծացնելու համար։

Տերեի բերքատվությունը և թթենու հողում ամրանալը կախված է տնկենու վորակից։ Թթնինները խառը, առանց տեսակավորման աշնկելու դեպքում, թփերը զարգանում են վոշ միահավասար, նրանցից առաջին տեսակները զարգանում են արագ, տալիս են մեծ քանակությամբ բերք, իսկ փոքրերի աճեցողությունը լինում է թույլ, բերքատվությունը՝ պակաս։

Ուրեմն՝ մինչև տնկելը, թթնիններն անպայման պետք է տեսակավորման չենթարկել։

Տնկելիս պետք է թրմատները մաքրել վիրավորված, չորացած և ավելորդ մասերից։ Գլխավոր արմատը պետք է կտրել սուր սեկատորով, թողնելով 10—15 սմ. չերկարությամբ, չեթե տնկիները չերկրորդ տեսակի յեն—այսինքն՝ 25—50 սմ., իսկ յեթե առաջին տեսակի յեն—50 սմ. և բարձր,—այս դեպքում կտրել մինչև 20 սմ.։

Յեթե հողածառը պարարտ չի և տնկիները միտածամտնակ մնալու

յնն առանց տնկելու, արմատները պետք է թաթախել ցեխի շաղախի մեջ և անմիջապես ժամանակավորապես թաղել հողում: Մերթ ընդ մերթ պետք է ջրել հողը, վորպեսզի արմատները չչորանան: Տնկելու ժամանակ հանել թաղած հողից՝ ըստ կարիքի: Արևոտ և քամոտ տեղերում պահելուց տնկիները կտրող են չորանալ, ուստի նրանց պետք է ծածկել և խիստ հետևել, վոր արևի տակ չջնան, այլ միշտ հով տեղում լինեն:

3. ԹԹԵՆԻՆԵՐԻ ՏՆԿԵԼԸ

Թթենիները կարելի է տնկել մեքենայով և ձեռքով: Իբրև տընկող մեքենա գործ է ածվում Բրուկերի ախլի մեքենան՝ հարմարեցրած թփայլն թթենիներ տնկելու պայմաններին: Նրա արտադրողականությանը բավում է 20—30 հաղար տնկի, այսինքն՝ 2—3 հեկտար, հազվելով մեկ հեկտարին 10,000 տնկի: Յերկշաբաթանի տնկող մեքենայի արտադրողականությանը կրկնակի չափով բարձր է: Տնկելու հետ մեկ տեղ մեքենան ջրում է: Այդ մեքենայի շնորհիվ բարձրանում է աշխատանքի արտադրողականությանը և տնտեսվում է բանվորական ուժը: Աշխատում է սեփական մոտորով կամ արակտորի ուժով: Բացի հիշյալ մեքենայից, տնկում են նաև ձեռքով: Ձեռքով տընկելու ժամանակ, շարքերը պետք է դնել մարկչորով. վերջինս չլինելու դեպքում՝ նաև պարանով: Շարքերը պետք է քաշել չողամասի վռոտման տեսակետից հարմար ուղղությամբ:

Մարկչորով դնելու համար, սկզբում հողի մի ծայրից ձգում են պարան: Վերջինս զուգահեռ դնում են մարկչորով: Հետագա զուգահեռ դնելը քաշելու համար պարանի գործածությանն անհրաժեշտ է: Յերբ մարկչորը հասնում է դաշտի ծայրին, վերագաճանալիս մարկչորի մի մասը գցում են նույն գործիքով առաջին անգամ քաշած ամենամայրի դնի մեջ և առաջ քաշում: Այսպես աստիճանաբար ստացվում են մեկը մյուսից հավասար հեռավորության վրա գտնվող զուգահեռ շարքեր:

Մարկչորի մասերը լինում են 2 մետր իրարից հեռու, վորով դնվում են միջշաբաթանի ուղղությանը: Միջտնկային տարածությանը և տնկիների տեղը վորոշելու համար, այդ լերկու մետրանոց շարքերին ուղղահայաց պետք է քաշել մի ուրիշ մարկչորով, վորը 0,5 մետր հեռավորության մասեր պետք է ունենա: Այսպիսով, մարկչորը միաժամանակ դնում է 2 մետրանոց միջշաբաթերը և 0,5 մետրանոց միջտնկային տարածությունները:

Դժեքը քաշելուց և տնկիների տնկելու տեղերը վորոշելուց հետո պետք է անցնել տնկելու աշխատանքներին: Յեթե մարկչոր չկա, կարելի

յի տնկել պարանի քոֆուլթումը, Հոդի մի ծալրում փայտ են ամրացնում և պարան կապում, վերջինիս մյուս ծալրը կապում են մի ուրիշ փայտից և ամրացնում հողում՝ դաշտի մյուս ծալրում, Մի շարք տնկելուց հետո, պարանը տեղափոխում են 2 մետր հեռավորությամբ և այդպես շարունակում մինչև դաշտի վերջը։ Բանվորներից մեկը պարանի մի ծալրից սկսում և փոսեր փորել՝ 0,5 մետր հեռավորությամբ։ Յերկրորդը տնկին դնում և այդ փոսը և ծածկում հողով։ Արմատները պետք է հողում ազատ փռել և յերբեք աղեղի պես կորացած չդնել։ Մի շարք այդ ձևով տնկելուց հետո, ինչպես վերը հիշեցինք, պետք է պարանը տեղափոխել 2 մետր հեռավորության վրա և նորից սկսել տնկել՝ 0,5 մետր միջտնկային տարածությամբ։ Ուրեմն տնկելիս աշխատում են 2 բանվոր, նրանցից մեկը փոսեր է փորում, յերկրորդը տնկում արմատներն ուղղելով՝ ծածկում և հողով։

Թթենիները պետք է տնկել անպայման ուղիղ շարքերով և իրար դիմաց։ Այդպես տնկելու դեպքում հեշտանում է թե՛ թթաստանի միջշարքերի մշակումը արեակտորի ու ձիու կուլալովատորներով և թե՛ տերև քաղող մեքենայի աշխատանքներն և կանոնավոր ընթանում և արդյունավետ լինում։

Շարքը-շարքից 2 մետր հեռավորության վրա տնկելով, իսկ միջտնկային տարածությունը—0,5 մետրի, մեկ հեկտարին ընկնում է 10.000 տունկ։

Ձեռքով տնկելու ժամանակ գործ են ածում բահ կամ տնկող ձող։ Վերջինս գործ են ածում այն ժամանակ, լերը հողը լավ մշակված և փափուկ է։

Թթենիները տնկել կարելի է թե՛ դարնանը և թե՛ աշնանը։ Գարնանը պետք է տնկել մարտի վերջերից մինչև ապրիլի 15—20-ը, իսկ աշնանը՝ նոյեմբերի սկզբներից մինչև ցրտերն սկսվելը։

4. ԹԻՍՏԱՆԻ ԽՆԱՄԲԸ

ա. Վոռոգումը.—Տնկիլուց անմիջապես հետո պետք է միջշարքերում ժողովել հասնել բուկիցով կամ բահով և թթաստանը ջրի բարակ հոսանքով ու դանդաղ, վորպեսզի ջուրը լավ ձծվի հողում։ Առանհրդ պետք է բացել տնկիներին մոտիկ՝ 30—35 սմ. լայնությամբ։

Նալած կլիմայական և հողային պայմաններին, թթաստանը կարելի է ջրել 15—20 օրը մի անգամ, յուրաքանչյուր անգամ առավել 450—600 խ. մ. ջուր, ուրեմն ամբողջ վեգետացիայի ընթացքում՝ միջին թվով 9—12 անգամ։

բ. Փխրացում.—Յեթե թթենիները տնկում են աշնանը, պետք է կատարել աշնանային միջշարքային փխրացում։

Գործնականին և ամուսնային միջնաբեկին փխրացումները խիստ կերպով պետք է համաձայնեցված լինեն վոռոգումների հետ: Յուրաքանչյուր վոռոգումից միջանի որ հետո, նայած թե հողի յերեսն ինչ աստիճան է կեղեմակալում, պետք է կատարել միջնաբեկին կուլտիվացիա: Այդ կուլտիվացիայի շնորհիվ ջրի ծախսումը խնայողորար է լինում և հողի միկրո-բիոլոգիական ու քիմիական պրոցեսների համար հաջող պայմաններ են ստեղծվում: Միևնույն ժամանակ թթաստանը մաքուր է պահվում, վեգետացիայի ընթացքում միջնաբեկին տարածությունները պետք է փխրացնել առնվազն 5—6 անգամ: Բացի դրանից, փխրացնել նաև վաղ գարնանը մեկ անգամ, մեկ ամսում ել ուշ աշնանը: Փխրացումները պետք է կատարել կուլտիվատորներով և փխրացնող գութաններով:

գ. Բաղնաձ. — Բացի այդ կուլտիվացիաներից, վեգետացիայի ընթացքում թթաստանի միջնաբեկները և տնկիների շուրջն անհրաժեշտ է առնվազն 2—3 անգամ քաղհանել, նայած թե հողն ինչ չափով է հարուստ մոլախոտերով:

Մոլախոտերն ողտադործում են հողի մեջ գտնվող թե սննդանյութերը և թե խոնավությունը, վորի հետևանքով թթենիները լինում են թուլ և բերքատվությունը պակասում է: Բացի այդ, մոլախոտերը ծածկելով թփերը և ստվերի մեջ պահելով, վոչ միայն դանդաղեցնում են թփերի աճեցողությունը, այլ և իջեցնում են տերեխի վորակը, հետևապես և նրա կերի արժեքը:

դ. Բուկի տալը. — Թթենիները տնկելուց հետո պետք է նրանց բուկը տալ: Այն շրջաններում, ուր գարունն սկսվում է չոր ու քամոտ լեղանակով, թթենիների բուկ տալը միանգամայն անհրաժեշտ է: Բուկ տալն ընդհանրապես և առավել ևս անհրաժեշտ է մանավանդ աշնանը տնկելու ժամանակ: Այն տեղերում, ուր աշնան ու ձմռան ցրտերը խիստ են, և ձմռանը ձյուն է ընկնում, անպայման պետք է թթենիների բուկը տալ: Բուկ տալն ոգնում է թթենիների հողում ամրանալուն և նպաստում է նրանց աճեցողության:

Բուկ տալու ալխատանքները պետք է կատարել բուկից մեքենաներով:

ե. Պարարացում. — Թիային թթաստանն անողայման պետք է պարարացնել: Թթենին հողից վերցնում է մեծ քանակությամբ սննդանյութեր, վորոնց թվում նաև ազոտ: Սեթե թթաստանին չվերադարձնենք այդ սննդանյութերը, տնկիները կլինեն նվազ, բերքատվությունը կնվազի, իսկ տերեխի վորակը կընկնի:

Թթաստանի հողը կաբելի յե պարարացնել թե հանքային պարարանյութերով և թե՛ որգանական:

Վորպես հանքային պարարտանյութ՝ կարելի չէ գործածել սո-
ֆոսֆատներում, սուպերֆոսֆատ և այլն: Որգանական պարարտանյութ-
երից կարելի չէ տալ դոմաղը և շերամի հարսնուկի ալյուրը:

Փորձերը ցույց են տվել, Վոր հանքային պարարտանյութերն ա-
մենալավ արդյունքն են տվել: յերբ մեկ հեկտարին տվել են 120 կէլո
մաքուր ազոտ և 80 կէլո մաքուր ֆոսֆոր: Յեթե Վորպես ազոտային
պարարտանյութ սուպֆոսֆատների և են տալիս, Վորն իր սեղ 20⁰/₁₀ մա-
քուր ազոտ ունի, ապա մեկ հեկտարին 600 կէլո պետք է տալ:

Վորպես ֆոսֆորային պարարտանյութ՝ սուպերֆոսֆատ տալու
դեպքում մեկ հեկտարին պետք է տալ 660 կէլո, չեթե նա իր մեղ 12⁰/₁₀
մաքուր ֆոսֆոր ունի: Յերկու պարարտանյութերն էլ գարնանը պետք
է տալ:

Պարարտանյութը պետք է շաղ տալ թթաստանի միջշաքերում և
թաղել հողում կուտրվատորներում կամ գութաններով 10—15 սմ, իր-
բությամբ:

Որգանական պարարտանյութերից դոմաղը պետք է լավ հա-
սուռնացած լինի և պետք է տալ աշնանը, Վորպեսզի ժամանակին քալ-
քայլի և նրա միջի սննդանյութերը յուրաքանչեւ թթենու կողմից:

Յեթե տնտեսությունում դոմաղը չկա, իսկ հողը վատորակ և սընն-
դանյութերով աղքատ է ու կարիք է դադարում անպայման պարար-
տացման, կարելի չէ կիրառել կանաչ պարարտացում, Վորի համար
թթաստանի միջշաքերում կարելի չէ ցանել վիկ, տեղական մաշ, շամ-
բալա և այլն:

Յերբ կանաչ պարարտացման համար ցանած բույսը ծաղկելու
շրջանում է լինում, հողը վարում են սովորական գութանով և շուտ
տալիս հողի տակ: Յերկու մատրանոց միջշաքերում ազատ կերպով
կարելի չէ տեղավորել 1,3 մետր տարածություն վրա այդ բույսերը,
թողնելով 35-ական սմ. հեռավորություն թթենու տնկիներից, միջշաք-
երի լերկու կողմից, վոստոգով առուների համար:

5. ՄԻՋԵԱՐՔԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՅԼ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կուկելտիվ և խորհրդային տնտեսությունների յեկամուտը բարձ-
րացնելու, սուսցված տերիի բերքատվության ինքնարժեքն իջեցնելու
և թթենիները լավ խնամելու նպատակով, թթենու միջշաքային ազատ
տարածություն անհրաժեշտ է ոգտագործել այլ կուլտուրաների հա-
մար: Կարելի չէ ցանել սոլա, մաշ, գետնանուշ, սոխ, բոստանի և բան-
ջարանոցային այլ կուլտուրաներ: Կարտոֆիլ չպետք է տնկել:

Ինչպես վերը հիշեցինք, թթենու աճեցողությունն ուժեղացնելու
և բարձր ու վորակով տերիի բերք ստանալու համար անհրաժեշտ է
հողը պարարտացնել:

ԹԹԵՆԻՆԵՐԻ միջլարքերում ցանկելով ԹԻԹԵՆԱԾԱՊԻԿՆԵՐԻ ընտանիքին պատկանող բույսերից—մաշ, սուտ, գետնանուշ, մենք վոչ միայն հողամասից ստանում ենք լրացուցիչ լեկամուտ, այլև պարարտացնում ենք հողն ազոտով։ Ձնայած վոք ազոտը չափազանց կարևոր սննդանյութ է ԹԹԵՆՈՒ համար և այն կազմում է ողի ծավալի $\frac{1}{10}$ -ը, այնուամենայնիվ ԹԹԵՆԻՆԵՐԸ չեն կարողանում ոգտվել ողի ազոտից։

Վերոհիշյալ բույսերի (մաշ, սոյա, գետնանուշ) արմատների վրա կան փոքրիկ պալարիկներ, վորտեղ ապրում են բազմաթիվ բակտերիաներ։ Այդ բակտերիաներն ընդունակ են լուրացնելու ողի ազոտը և վերլինով հարստացնելու հողը։ Ահա ԹԵ Ինչու ձեռնտու չե ԹԹԵՆԻՆԵՐԻ միջլարքերում ցանել այդ բույսերը։

Այդ բույսերը մեղնից առանձին խնամք չեն պահանջում, նրանց մշակելը կարելի չե հարմարեցնել Թփերի խնամքի և մշակման ախտատանքների հետ։

Գետնանուշը պետք է ցանել վոշ ուշ, քան մալիս ամսի առաջին կեսերին։ Պետք է ցանել մարզի մեջ միաշարք։ Սերմերը պետք է զցել 4—5 սմ. խորությամբ և բույսը-բույսից ցանել 35—40 սմ. հեռավորությամբ։

Գետնանուշի խնամքն ու մշակությունը կարելի չե հարմարեցնել ԹԹԵՆՈՒ խնամքի և մշակության հետ, բացի մի դեպքից, վորը բղխում գետնանուշի առանձնահատկությունից։

Յեբբ նրա ծաղիկը Թափվում է, նրա ծաղկակոթը թնջվում է դեպի գետին, խորասուզվում հողում 7—10 սմ. և այնտեղ զարգացնում էր պտուղը պինդ հողում ծաղկակոթը չի կարողանում Թափանցել, այդ իսկ պատճառով գետնանուշի ծաղկելու և պտուղ տալու ժամանակ նրա տակի հողը պետք է շատ լավ փխրացնել։

Հովտեմբերի վերջերին կարելի չե հավաքել գետնանուշի բերքը։ Գետնանուշի պտուղներն ոգտազործվում են յուղ ստանալու համար։ Նրա սերմերի մեջ 50% -ը յուղ է, վորը բարձր սննդատու հատկություն ունի։

Ոգտազործելով ԹԹԵՆՈՒ միջլարքերը գետնանուշով, մեկ հեկտարից կարող ենք ստանալ 500—600 կիլո բերք։

Միջլարքերում չպետք է ցանել գետնանուշի Թփածե տեսակը։ Պետք է ցանել այնպիսի տեսակներից, վորոնք շատ չեն Թփակալում, հակառակ դեպքում կարող են ծածկել ԹԹԵՆՈՒ Թփերին։ Սոյան միջլարքերում կարելի չե ցանել շարքի ու մարդերի կողքերից։ Պետք է ցանել 4—5 սմ. խորությամբ, միաժամանակ զցելով 2—3 հատ սերմ բույսը-բույսից 25—30 սմ. հեռավորության վրա։ Ճանելուց առաջ սերմը պետք է Թրջել։

Ցանքսը պետք է կատարել նախորոք ջրած և խոնավացրած

միջաբերում։ Սոյալի ձիւրը լերնալուց միջանի որ հետո պետք է թողնել մեկ հաս ուժեղը, իսկ մնացածները հանել։ Սոյալի հետագա մշակումը՝ մոլախոտերից աւառելը, ջրելը, փխրացնելը կարելի է հարմարեցնել թթենու խնամքի աշխատանքների հետ։

Մեկ հեկտարից կարելի է ստանալ 1200—1750 կիլո բերք։ Միջաբերում մաշ ցանելով, կարող ենք ոգտագործել նրանից ստացած հատիկները, կամ թե մաշը կարելի չե ցանել իբրև կանաչ պարարտանյութ, ինչպես հիշեցինք վերը։ Մեկ հեկտարից ստացվում է մոտ 500—650 կիլո սերմ։

Ոգտագործելով թթենու միջաբերը, միաժամանակ լուրջ ուշադրութուն պետք է դարձնել մշակման և խնամքի աշխատանքների վրա։

Սոլախոտերը պետք է ժամանակին քաղհանել։ Ժամանակին չքաղհանելու դեպքում միջաբերի թե աղետ հողամասերում և թե թթենու ու յերկրորդական կուլտուրաների կողքերին մոլախոտերն այնպես են բարձրանում, վեր ծածկում կամ միմյանց են խառնվում և կուլտուրական բույսերի դարգացման համար ստեղծվում է աննորմալ պայմաններ։

Հաճախ բերքի հալածելն անհնարին և լինում մոլախոտերով խճված լինելու պատճառով։ Անխնամ թողած թթաստանից վնչ միայն լրացուցիչ լեկամուս չի ստացվում, այլ փչառում և նաև թթաստանը և կարճ ժամանակից հետո իջնում և թթենու բերք սալությունը։

6. ԹԹԵՆԻՆԵՐԻՆ ԶԵՂ ՏԱԼԸ

Տնկելուց առաջ արմատները մաքրելու և կտրելու ժամանակ, ցողունը սուր սեկատորով պետք է կտրել 10 սմ. բարձրության վրա և ապա տնկել։ Թեթե տնկելուց առաջ ցողունը կտրված չի լեղել և արդեն թթենին տնկված է, անմիջապես պետք է կտրել, դարձյալ 10 սմ. բարձրության վրա։


Թթենիներին հենց տնկելու տարին պետք է տալ թփի ձևը։ Տնկելուց հետո 30—40 որանց, յերբ բույսի մեջ սննդանյութերի փոխանակութունը սկսված է, բնի վրա զբաղանում են մի շարք վոստեր։ Այդ վոստերից 3 հաս պետք է թողնել, իսկ մնացածները հիմքից կտրել։

Թողած այդ 3 վոստերը պետք է կտրել 10—15 սմ. բարձրության վրա։ Պետք է կտրել սուր սեկատորով այնպես, վեր կտրված մասում թուփը չարտվի։

Այդ տարին թփերը չպետք է ոգտագործել, այլ թողնել, վոր թե բունը և թե վոստերն աճեն և ուժեղ դարգանան։

Տնկելուց մի տարի հետո, այսինքն՝ հետևյալ գարնանը, թթաստանը կարելի չե ոգտագործել:

Թփալին թթաստանն սկսում են ոգտագործել տնկելու լերկրոտ տարուց: Ոգտագործման տարին, գարնանը վորդին կերակրելու օամանակ, տերևները քաղելիս և ճյուղերը կտրելիս, թփերին պետք է իր վերջնական ձևը տալ: Տնկման առաջին տարում թողած 3 վոստերի վրա դուրս լեկած նոր վոստերից պետք է թողնել նորից 2-ական հատ, իսկ մնացածները կտրել: Նույնպես պետք է մաքրել նաև բունը: Թողնելով այդ վոստերը, թուփը կունենա 6 ճյուղ: Մի թվի վրա կտրելի լե թողնել 6—8 ճյուղ, վորոնց վրա դուրս լեկած միամյա վոստերի տերևներն ոգտագործում են վորդի կերի համար:



Նկ. 1. Թփի ձևավորումը:

7. ԲԵՐՔԻ ՔԱՆԱԿԸ

Յեթև թթենիներին պահանջված ձևով խնամենք, բերքատվությունը բարձր կլինի: Բերքատվությունը կախված է մի շարք հանգամանքներից — կլիմայից, թթենու տեսակից, մեկ հեկտարի վրա տնկած տնկիների քանակից և այլն:

Բերքատվության քանակը և տերևի վորակը զգալի փոփոխություն է լենթարկվում թթենիների խտությունից:

Որինակ՝ 1 հեկտարին 20.000 տունկ տնկելու դեպքում ստացվել և առաջին տարին 500—600 կիլո տերև, 15.000 տունկ տնկելու դեպքում, դարձյալ առաջին տարին ստացվել է 4.800 կիլո տերև, 10.000 տունկի դեպքում՝ 4.480 կիլո:

ԹՎԻՐԻՅ յերևում է, վոր տերևի բերքատվութիւնը բարձրանում է թփերի քանակի ավելացման զուգընթաց, բայց, ինչպես լերևում է ստորև բերված աղյուսակից, մեկ թփից հեկտարին 10.000 տունկ տընկելու դեպքում ավելի շատ բերք է ստացվում, քան թե 20.000-ի դեպքում:

Մեկ թփից ստացած բերքի քանակը

1 հեկտ.	20.000 տնկի	15.000 տնկի	10.000 տնկի
1 թփին	280 կգ.	320 կգ.	448 կգ.

Մեկ միավոր տարածութեան վրա շատ թթենիներ տնկելու դեպքում, բացի 1 թփի բերքատվութեան նվազելուց, ընկնում է նաև տերևի վորակը:

Խիտ տնկած թթենիների տերևները լինում են ավելի բարակ, աննշանութեքով աղքատ, կարճ ժամանակով պահելիս աւագ թաւամուս են և կորցնում տերևի կերի արժեքը: Շեքամապահների և թթազործների համամիութենական 3-րդ համագումարը վորոշեց, 1 հեկտարին 10.000 հատ թթենի տնկելու դեպքում, բերքատվութեան քանակը միջին թվով ընդունել հետևյալը.—

Ոգտագործման	1-ին տարին		3 տոնն
»	2-րդ »		5 »
»	3 րդ »		8 »
»	4-րդ »		10 »
»	5-րդ »		12 »

8. ՏԵՐԵՎԻ ՈՓՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳԱՐՆԱՆ ՅԵՎ ԱՇԵՆԱՆ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Վորպեսզի թփային թթենիները կարճ ժամանակում չհլուծվեն, բերքատվութիւնը և տերևի վորակը չիլին, թթենիները պետք է ոգտալործել հետևյալ կերպ.

Դարնան կերակրումների ժամանակ թթենիները պէտք է ոգտագործել առկորեական ձևով, այն և՛ վորդին փոքր հասակում տալ տերևները, իսկ մեծ հասակում տերևները ճյուղերով: Աշնան կերակրումների ժամանակ, նոր դուրս յեկած ճյուղերի $\frac{1}{4}$ մասը պետք է կտրել և քաղել մնացած վոստերի տերևները: Վորպեսզի նույն աշնանը վոստերի վրա գտնվող բողբոջները նորից չբացվեն, անհրաժեշտ է վոստերի ծալքերին անպալման 4—5 տերև թողնել:

IV. ԲԱՐՁՐԱԲՈՒՆ ՍԻՍՏԵՍԻ ԹԹԱՍԱՆ

Թփային սիստեմի թթաստանն իբ խոշոր առավելություններէ հետ մեկտեղ ունի մի բացասական կողմ, այն է՝ թփերն ոգտագործվում են մինչև 15 տարեի, վորից հետո թթաստանը պետք է վերանորոգել:

Կուլտեսեսություններին և խորհտեսեսություններին հետագայում կերի բազայով ապահովելու համար, ալժմվանից պետք է անցնել բարձրաբուն սիստեմի թթաստաններ հիմնելուն: Այն ժամանակ, լերթ թփային սիստեմի թթաստանները վերանորոգման կարիք են դառնում, բարձրաբուն սիստեմի թթենիներն արդեն զարգացած կլինեն և մաքսիմում քանակով տերև կտան:

Բարձրաբուն րիեմունց անվ ատլը.—Տնկարանից ստացած միամյա տնկին մինչև մշտական թթաստանը տեղափոխելը, պետք է թթենին զարգացնել և զագաթը ձևավորել տնկարանում, վորի համար թթենին պետք է պահել առնվազն յերկու տարի:

1. ՏՆԿԱՐԱՆ. ՀՈՂԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Բարձրաբուն թթաստանի տնկարանի հողի ընտրության ժամանակ պիտի առաջտորդել նույն պահանջներով, ինչ վոր թփային թթաստանի դեպքում: Տնկարանին հատկացված հողամասը պետք է լինի պարարտ, հնարավորին չափ հարթ, տեղը լավ լուսավորված և քամիներից պաշտպանված:

Տնկարանի հողը նույնպես պետք է վարել աշնանից՝ 20—30 սմ. խորությամբ: Աշնան վարի շնորհիվ, ձմեռն ընթացքում խոնավությունը ծծվում է հողում, մուլախոտերն արմատահան են լինում և քայքայվում են:

Դարնանը նորից պետք է կրկնավարել՝ 10—15 սմ. խորությամբ: Նորից մուլախոտերը հավաքել հողախառից և տանել հեռու, այրել կոշտերը պետք է փխրացնել:

2. ՏՆԿԱՐԱՆՈՒՄ ԹԹԵՆԻՆԵՐ ՏՆԿԵԼԸ

Տնկարանում մեկ հեկտարին կարելի չէ տնկել 30,000—40,000 տունկ. հաշվելով միջլարային տարածությունը 50—80 սմ., միջտընկային տարածությունը՝ 30—40 սմ.:

Տնկել կարելի չէ մարկլորի և պարանի ոգնությամբ (մանրամասնությունները տես «Թփային թթաստան»-ի գլխում):

3. ՏՆԿԻ ՉԱՐԴԱՅՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

Տնկիների արժատային սխտեմն ուժեղ զարգացնելու և հողում խորը թափանցելու համար, տնկելուց առաջ պետք է կտրել արժատավորի մասից, հողի լերեսին թողնելով 2—3 բողբոջ, կամ մոտավորապես 5—8 սմ. լերկարությամբ:

Կարճ ժամանակում բնի վրա, կտրվածքի մասերից դուրս են դալիս նոր վոստեր: Մայիսին կամ հուլիսին բնի վրա գտնվող ալդ ճյուղերից մեկը, վոր ամենաուժեղն է և առողջը պետք է թողնել, իսկ մնացածները բոլորը կտրել հիմքից:

Թողած վոստն արագ աճում է, վորովհետև բույսի մեջ կուտակված սնունդը ծախսվում է միայն այդ մի վոստի համար:

Մեկ ամսվա ընթացքում լավ խնամած ճյուղը հասնում է 1,5 մետր և ավելի լերկարության: Բունը կտրած և հիմքից դուրս չեկած նոր տնկենու աճեցողութունն այնքան ուժեղ է լինում, վոր հասնում ու աճեցնում է բունը չկտրած տունկիից: Բնի հիմքից դուրս չեկած նոր վոստը դառնալու յի բարձրարուն է թենու բունը:



Նկ. 2. Տնկիների առաջին տարվա խնամքը տնկարանում:

Ամռան ընթացքում ճյուղի վրա դուրս են գալիս լերկարակառն վոստեր: Վերջիններս միանգամից ամբողջովին չափաք է կտրտել և ճյուղը մեղկացնել: Վոստերը բոլորովին կտրելու դեպքում բունը կբաժանվի ու կլերկարի: Պետք է կտրել այնպես, վոր բնի վրա այդ վոստերից մնան 5—10 սմ. լերկարությամբ: Թողած վոստերի վրա զրանվող տերևները թթենու համար սննդանյութեր են պատրաստում, վորով և հաստացնում են բունը:

4. ԹԹԵՆՈՒ ԳԱԳԱԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ — ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՄ

ԹԹԵՆՈՒ ԳԱԳԱԹԸ ձևավորելու համար հետևյալ գործունը, ապրիլին կամ մայիսի սկզբներին, աստիճանաբար կտրում են բնի վրա նախ ընթաց տորվանից մնացած վոստերը՝ սկսած գետնից, գազաթին թողնելով 3 հատ ճյուղ։ Վերջիններս կազմելու լին ապագա կանոնավոր գազաթի հիմքը, այդ իսկ պատճառով կոչվում են ճիմնական ճյուղեր։ Յեթն նկատվում են, վոր թողած 3 հիմնական ճյուղերից մեկն ու մեկն ափսիս արագ և զարգանում, քան մնացածները, պետք և գազաթից կտրել՝ մյուսներին հավասարեցնելով։

Դրանով թթենու գազաթը վերջնականապես ձևավորված է և նա պատրաստ է միայն թթաստան տեղափոխելու համար։



Նկ. 3. Գազաթի ձևավորումը անկարանում

Բացի գազաթին ձև տալուց, ամառվա ընթացքում բնի վրա դուրս չեկող յերկրորդական ճյուղերը պետք և կտրել, բունը միանգամայն մաքուր պահելով։

5. ՏՆԿԱՐԱՆԻ ԽՆԱՄՔԸ


Նայած կլիմայական և հողային պայմաններին, տնկարանը կտրելի լին ջրել լուրաքանչյուր 15—20 ուրը մի անգամ, կամ միջին հաշվով՝ ամսական 2 անգամ: Զուրը պետք և ծախսել խնայողաբար, ուստի հողի լերեսին առաջացած կեղևը ժամանակին պետք և փխրացնել, հակառակ դեպքում ջուրը կչորորիանա և կարիք կզգացվի տնկարանն ավելորդ անգամ ջրելու: Միջաբազին տարածութունները պետք և փխրացնել կուտրվատորներով և ձիու ու ձեռքի պլաններով: Յեթե միջանկարին տարածութուններն իրար մոտ են և մեքենայով փխրացնելը հնարավոր չի, պետք և ձեռքի ուրաքներով փխրացնել:

Զուրն աննպատակ չգործդիանալու և հողի սննդանյութերը չկորչե ու համար, անհրաժեշտ և մոլախոտերն անպայման քաղհանել:

Պետք և պարարտացնել ազոտական և ֆոսֆորական պարարտանյութերով: Մեկ հեկտարին 40 000 տոննի տնկելու դեպքում կարելի չե տալ 120 կիլո մաքուր ազոտ:

6. ԹԹԵՆԻՆ ՄՇՏԱԿԱՆ ԹԹԱՍՏԱՆՈՒՄ ՏՆԿԵԼԸ. ՓՈՍԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մինչև թթենիների տնկելը, պետք և փոսեր փորել: Թթենիները դարձան տնկելու ղեկքում, փոսերը փորում են նախորդ աշնանը, իսկ աշնանը տնկելու ղեկքում՝ ամռանը, վորպեսզի ձմռան և ամռան ըն-



Նկ. 4. Փոսեր փորելը

թացքում ոչի, մթնոլորտային տեղումներին, տաքի և ցրտի ազդեցության շնորհիվ փոսի հողը լավ փխրվի: Փոսերը փորելիս վերին պո-

բարա հողը պետք է կլտել փոսի մի կողմը, իսկ ավելի խորը շիտի հողը—փոսի մյուս կողմը:

Փոսի հատակի հողը պետք է լավ պարբերաբար և փերացնել՝ Փոսերի խորությունը կախված է կլիմայական, հողային և այլ պայմաններից: Յնթե հողը և կլիման չորային են, փոսիցը կարելի լի փորել խորը, մոտ 60—70 սմ. և հակառակը—ավելի յերևա նյ՝ 35—50 սմ., լեթե հողը և կլիման խոնավ են: Վորքան լեթե, դը վատորակ է, անքան քիչաակար և խորը փորելը, վորովհետև թթենու արմատները տարածվում են ներքին՝ համեմատաբար սննդանյութերով աղքատ շերտերը:

7. ԹԹԵՆԻՆԵՐ՝ ՏՆԿԵԼԸ

Թթենիները 2 տարի տնկարանում վերահիշյալ ձևով դարգացնելուց և գազաթին 3 հիմնական ճյուղեր թողնելուց հետո, կարելի լի տնկել մշտական թթատանում: Տնկել կարելի լի աշնանը կամ հետևյալ գարնանը: Դարնանը պետք է տնկել սինչև թթենու մեջ սննդանյութերի փոխանակութունը սկսվելը, կամ բողբոջելը:

Մինչև տնկելը, թթենինների արմատները պետք է մաքրել վիրավորված և ավելորդ մասերից և գլխավոր արմատը թողնել մոտ 25 սմ. լերկարությամբ: Արմատները կարելի մեծ վերքեր չպետք և առաջացնել: Կտրվածքը պետք է լինի ձվաձև, համարյա կլոր և հարթ:

Թթենիները տնկելուց ետոջ պետք է մաքրել կողքերից քանդված ու փոսի մեջ թափված հողը:


Պետք է տնկել հետևյալ ձևով.—

Նախ և առաջ փոսում բլրակի ձևով պետք է լցնել վերին շերտը պարբերա հողը, վրան դնել թթենին՝ արմատներն ուղղված: Թթենու կողքին, փոսի կենտրոնից մոտ 8—10 սմ. հեռավորության վրա, ձող պետք է տնկել:

Տնկելիս սովորաբար աշխատում են լեքկա բանվոր: Նրանցից մեկը բռնում է ծառը, մյուսը զգուշությամբ, կանոնավոր, առանց խրճճելու կամ կորացնելու, արմատները դասավորում է փոսում և վրան զգուշությամբ հող լցնում: Արմատները ծածկելիս պետք է հետևել, վոր հողը լավ նսալ թե արմատների միջև և թե տակը, և դատարկ տարածություններ չմնան: Դրա համար հողը լցնելու ժամանակ թթենին շատ թեթև պետք է շարժել և ձեռքով հողը դասավորել արմատների միջև: Արմատներին հողը պետք է լցնել վոչ թե կոշտերով, այլ փերացրած:

Թթենին փոսի մեջ գտնվող բլրակի վրա պետք է տնկան դնել, վոր արմատավրին իր շրջապատից մի փոքր բարձր լինի, վորովհետև

հողի նստելու հետ նա յիշ կնստի: Փոսը ծածկելուց հետո, հողը կա-
րելի լին վոտջով ամրացնել, միայն թե բնից անջան հեռու և անպիսի
զգ. ւշութւամբ, վոր չվերավարվեն տրմատները:



Նկ. 5. Բարձրաբուն թթենու տնկելը:

Տնկելուց հետո տնմիջապես պետք է ջրել: Եթե ջուրն արագ
իջնում է ցած և քանդում է հողը, այդ նշանն է, վոր փոսը լավ չի լց-
րած, ներսը դատարկ է, ուրեմն անմիջապես նորից պետք է լցնել հողով:

Թթենու հետ տնկած ձողը պետք է հալասաք լինի թթենու դա-
դաթին: Թթենին ձողից պետք է կապել ճլռալով կամ ուռնու կեղևով,
և լերբեք կաննիի թելով, վորովհետև բնի հաստացման ժամանակ կա-
ննիի թելը մտնում է կեղևի մեջ և կտրում:


Թթենին ձողից պետք է կապել մի քիչ առաջ, վարպեսդի հողը
նստելու ժամանակ ծառն էլ ազատ նստի:

Բարձրաբուն թթենիները թթաստանում կարելի չէ տնկել 2 ձև-
վով—1. քառակուսիներով, 2. շախմատաձև:

ա. Քառակուսի ձևով.—Այս ձևով տնկելիս ամբողջ հողամասը բա-
ժանում են ուղիղ քառակուսիների և թթենիները տնկում են նրա
ծալերին:

Ուրեմն չորս ծառերը լերկու հարեան շարքերում կազմում են քա-
ռակուսի: Այս ձևով տնկելու դեպքում թթենիները հալասաք հեռավո-


ըուծյան վրա յեն լինում՝ լերկու ուղղութեամբ: Իրար դիմաց գտնվող անկյուններում տնկած ծառերն իրարից ավելի հեռու յեն գտնվում: Քառակուսի ձևով տնկելու դեպքում հողամասը խնայողաբար չի ոգտագործվում, ամեն ավելի միևնույն տարածութեան հողամասում ավելի քիչ թվով ծառեր են տեղավորվում, քան շախմատաձև տնկելու դեպքում:



Նկ. 6. Քառակուսի ձևով տնկված:

բ. Շախմատաձև. — Հողամասը խնայողաբար ոգտագործելու համար թթենիները պետք է շախմատաձև տնկել: Շախմատաձև տնկելու ժամանակ ամբողջ հողամասը բաժանում են հավասարակողմ յեռանկյունիների և տնկում են ամենկյուններում:

Այս ձևով տնկելու դեպքում միևնույն տարածություն վրա $1/7$ ու
 ալիլի ծառեր են քնկնում, քան թե քառակուսի ձևով տնկելու դեպ-
 քում: Բարձրաբուն թփերն են կարելի լին տնկել 4—5 մետր հեռավո-
 րություն վրա: Մի միավոր տարածության վրա թիվ ինքի նոսր կամ




Նկ. 7. Ծախմատաձև տնկված

խիտ տնկելը կախված է տվյալ վայրի կլիմայական և հողային
 պայմաններից: Յեթե թփերն ու զարգացման և աճեցողության համար
 հիշյալ պայմանները բարենպաստ են, վորի շնորհիվ թփերն են աճե-
 ցողությունն ուժեղ և լինում, մեծ քանակությամբ վոստեր են տալիս
 և ընդհանրապես փարթամ են լինում, ալդ դեպքում նոսր են տնկում
 5—6 մետր հեռավորության վրա, վորպեսզի ծառերն իրար չխանգա-
 րեն, չմթնացնեն, չբարձրանան ընդհանուր բարձր լինի ու տերեր՝ լավորակի
 Հակառակ դեպքում՝ խիտ են տնկում: Ընդհանուր առմամբ պետք է
 տնկել 4—5 մետր հեռավորության վրա: Պտղատու թփերն են, վորոնցից
 սերմ է ստացվելու, կարելի լին տնկել 5—6 մետրի վրա, լեթե հողային
 պայմանները բարենպաստ են:

Յ. ԲԱՐՁՐԱԲՈՒՆ ԹԹԵՆԻՆԵՐԻ ԳԱԳԱԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ
ՆՐԱՆՅ ԽՆԱՄԳԸ

Թթաստանում տնկած թթենին համարվում է լեռամյա, վորովհետև մեկ տարի դառնվել է բուժարանում, 2 տարի տնկարանում, թթենին ունի 3 հիմնական ճյուղ, վորոնցից յուրաքանչյուրը պետք է կտրել 20—25 սմ. յերկարության վրա: Բնի վրա դուրս լեկող յերկրորդական վտակներն ամբողջ տարվա ընթացքում պետք է կտրել և ծառը միանգամայն մաքուր պահել: Յ հիմնական ճյուղերի վրա զանվող վտակներից 2-ական պետք է թողնել յուրաքանչյուրը ճյուղի վրա, իսկ



Նկ. 8.

Թթենու դադաթը 6 հիմնական
ճյուղերով:

Թթենու դադաթը 12 հիմնական
ճյուղերով:

Մնացածները կտրել: Այսպիսով 4 բոլորում թթենին կունենա 6 հիմնական ճյուղ: 5 բոլորում սկզբին այդ ճյուղերի ծալքերը պետք է

կտրել, թողնելով լուրաքանչյուրից մոտ 18—20 սմ.։ Խնամքը դարձյալ նույնն է։ Պետք է մաքրել բնի վրա դուրս լեկած լերկրորդական ճյուղերը 6 հիմնական ճյուղերից լուրաքանչյուրի ծայրին պետք է թողնել 2 ակուն հիմնական ճյուղ։ Ուրեմն 6-րդ տարում թթենին կունենա 12 հիմնական ճյուղ։

Նույն ձևով 6-րդ տարում կստացվի 24, 7-րդ տարում՝ 48 հիմնական ճյուղ։


Շերամի կերի համար մեջ թե պետք է կտրատել և ողտազործել այդ 48 հիմնական ճյուղերը, այլ նրա վրա դուրս լեկող միասյա վոստերը, առանց փլատելու այդ հիմնական վոստերից մեկն ու մեկը։

Անպարտան 48 հիմնական ճյուղեր ունենալը պարտադիր չի։ Յեթե հողային և կլիմայական պայմաններն տնտեսական են, թթենին չի կարող դիմանալ ուժեղ ծանրաբեռնվածոթյուն, կտրելի լե սահմանափակվել 24 հիմնական ճյուղերով, 12-ով կամ նույնիսկ 6-ով։

Յեթե նախատեսված է թթենին պտղաբերության համար, վորից ստացվելու լե սեր, կտրելի լե թողնել 12 կամ 6 հիմնական ճյուղ։ Նրանց վրա դռնվող վոստերն ազատ կանեն, միայն շարունակ պետք է հետևել և հեռացնել լալն ալելորդ ճյուղերը, վորոնք շփվելով՝ իրար խանգարում և վերաճում են։

Թթենու զաղաթը ձևավորելու աշխատանքների առողջութունը կործանցելու նպատակով, լեթե կլիմայական և հողային պայմանները քարենապատ են, մեկ տարում կտրելի լե առաջացնել մեջ լե մեկ կարգ հիմնական ճյուղեր, ալ չերկու կարգ։ Կարճացնելով ձևավորման տեղում լեյունը, հնարավոր է լինում լեթենին ողտազործել միջանի տարով ալելի շուտ, արագացնելով տերևահավաքը։

Թթենու ալ մեկ զաղաթ ունենալու առաջնությունն ալն է, վոր տերևահավաքն արագ և հեշտ և կատարվում, ճյուղերն արել լույս ու ջերմություն ստանում են հավասարաչափ և տերևները սննդանյութերով հարուստ են լինում, վորովհետե ծառի սննդանյութերը առանձնապես կլում են վորոք քանակությունը ճյուղերի մեջ։



Նկ. 9. Թթենու զաղաթը 24 հիմնական ճյուղերով

9. ԲՍՐԶՐԱԲՈՒՆ ԹԹԵՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Յուրաքանչյուր տարի թիմաստանի հողն առնվաղն յերեք տնգամ պետք է փորել՝ նայած տարվա չեղանակին: Առաջին տնգամ գարնան հախց հետո—մարտ ամսվա ընթացքում, կամ ապրիլի սկզբներին, Յերկրորդը՝ տերևահաղթից հետո, մոտավորապես հունիսի վերջերին, կամ հուլիսի ընթացքում, և յերրորդը՝ ուշ աշնանը, տերևաթափի ժամանակ, վորպեսզի ձմռան ընթացքում թափված ձյունն ու խոնավու-թյունը ծծվի հողում:

Բացի այդ, տարվա ընթացքում պահանջված ձեռք պետք է վո-չընչացնել մալախոտերը:

Առնվաղն յերկու տարին մեկ տնգամ հողը պետք է պարարտացնել հասունացած գոմաղբով, նայած թե հողն ինչքան է հարուստ սննդանյութով, մեկ հեկտարին կարելի լի տալ 20—40 տոնն կամ 1200—2400 փութ հասունացած գոմաղբ:

Ծանր հողերում (կավային և այլն) գոմաղբը ծառի տակը պետք է լցնել աշնանից, իսկ թեթև հողերում, վորտեղ գոմաղբի տարրալուծու-թույնն արագ է կտատրվում, կարելի լի լցնել նաև գարնանը: Վորպեսզի գոմաղբի ազդուը չկորչի (վորովհետև հեշտության մեջ կարող է դուրս գալ և ցնդել ողում) յերկու դեպքում էլ (թե աշնանը և թե գարնանը) գո-մաղբը պետք է ծածկել հողի բարակ շերտով:

Առանձին թիմնիների տակը լցնելու դեպքում գոմաղբը պետք է ծառի շուրջը փռել այն հաշվով, վոր նրա շերտը մոտ լինի հողում գտնվող մանր արմատներին և վոչ թե բնին: Գոմաղբը բնից առնվաղն 20—30 սմ. հեռու պետք է փռել շրջանաձև, վորպեսզի թիմնու կեղևը գոմաղբի հետ շփվելուց չալբվի:

10. ԻՆՉՊԵՍ ՊԵՏԻ Ե ԵՏՆԷ ԹԹԵՆԻՆ

Վորպեսզի թիմնին հետադառնա լավ աճի, ասողի լինի և բերքա-տալու թյունը բարձր, ամեն տարի գարնանը պետք է ուղիղ հատել, ծառը մաքրել չորացած ու կտրատված ճյուղերից:

Այս բանին մեր կուտնաստականները պիտի հատուկ ուշադրու-թյուն դարձնեն:

Գարնանն հետի շաղկապ պետք է հասա ճյուղերը կտրատել ալգու սուր աղոցով, իսկ բարակ ճյուղերը՝ սեկատորով: Ծյուղերի կտրելուց հետո, կտրվածքը միշտ պետք է մաքրել, հարթել այգու սուր դանակով և մածիկով ծածկել:

Ետեկիս կտրվածքը պետք է լինի բնին մոտ, քիչ թեք և պայտաձև: Յեթե կտրվածքը շատ հարթ է ու խոշոր, առաջանում է մածվերք, հետագայում թթենին չի կարողանում ծածկել և ուժասպառ է լինում: Պետք է կտրել ալնպես, վոր բնի վրա ճյուղի ավելորդ մաս չմնա. այդ ավելորդ մասը հետագայում չորանում է, փչակ է առաջանում կամ անձրևի կաթիլներն ընկնելով փչակը՝ փտեցնում են և ստեղծում հաղմար միջավայր զանազան միջատների և վորդերի համար: Ետեկիս զանակով պետք է կտրել միշտ ճյուղի ներքևի կողմից, վորպեսզի կտրվածք չառաջանա, կամ կեղևը չպոկվի:

Այգու սղոցով հաստ ճյուղերը կտրելիս չի կարելի սղոցել հերքերից միանգամից, այլ նախ մի մասը պետք է սղոցել ցածից, ապա հանելով սղոցը՝ կտրել վերևի մասից:

Այսպիսի կրկնակի սղոցման ժամանակ հաճախ վերքն անհամար է լինում, ուստի խոշոր նշանակություն ունի հենց սկզբից սղոցելիս ճիշտ ուղղություն վերցնելը:

Պատահում է, վոր զարնանը թթենուն առանձնապես վո՛ր մի խնամք ցույց չեն տալիս, ինչ շերամին կերակրելիս՝ կացնով կամ բուրբ սղոցով ու զանակով ալնպես են կտրատում թթենու ճյուղերը, վոր ծառի վրա խոշոր վերքեր ու ճեղքվածքներ են առաջանում: Ծառը չկարողանալով բուժել իբ վերքերը—հիվանդանում, ուժասպառ է լինում ու անժամանակ չորանում: Ի կավ խնամված ծառի վերքը՝ բն արագ ծածկվում են, և թթենին առողջ է լինում ու կավ բերք է տալիս:

11. ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրաբուն թթենու բերքատվության քանակը կախված է զանազան պայմաններից՝ խնամքից, թթենու տարիքից, կլիմայից, տեղակից և այլ պայմաններից:

Միջին հաշվով 8-րդ տարում կալելի յե հավաքել 2—4 կիլո տերև

9 »	»	»	»	4—8 »	»
10 »	»	»	»	8—12 »	»
11 »	»	»	»	12—16 »	»
12 »	»	»	»	16—20 »	»

20 տարեկան թթենին կաշող է տալ մոտավորապես 30-ից մինչև 45 կիլո տերև:

Յեթե ընդունենք, վոր բարձրաբուն սիստեմի թթաստանում ծառերը անկված են 5×5 մետրի վրա՝ քառակուսի ձևով, հեկտարին էլնկնի մոտ 400 թթենի: Ընդունելով, վոր միջին հաշվով 20 տարե-

կան ծառը կարող է տալ 30—45 կիլո, ապա մեկ հեկտարից կստացվի մոտ 12.000—18.000 կիլո տերև, վորով կարելի յն պահել 12—18 տուփ գրենա, կամ թե 15—22,5 տուփ, լեթե մեկ տուփին ծախսվի 800 կիլո տերև:


12. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՏՐԱՍՏԵԼ ԹԹԵՆՈՒՆ ԶՄԵՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յեթե շրջանի կլիման տաք է և ձմեռվա ընթացքում ցրտահարվելու վախ չկա, պետք է կտրատել բոլոր կտրատված ճյուղերը և հեռացնել նրանց. վորոնք շփվելով պետքական ճյուղերի հետ՝ ֆուսսում են: Վերքերը պետք է ծածկել մածիկով:

Թթենիների, մասնավորապես լերիտասարդները ըններին պետք է քսել կրահողի շաղախ, վորպեսզի ծառը պահպանվի զանազան կենդանիների հարձակումներից և հիվանդություններից: Ծառերի տակը, ինչպես հիշված է վերը, պետք է լցնել դոմաղը, լեթե անհրաժեշտ է:

13. ԹԹԵՆԻՆԵՐԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄԸ

Յերկար տարիներ թթենիներն ոգտազործելով, ճյուղերի վրա տ-




Նկ. 10. Բարձրաբուն թթենու աստիճանական յերիտասարդացումը:

ռաջանում են ուռուցքներ, վորոնք աստիճանաբար մեծանալով՝ խան-
դարում են լերիտասարդ ճյուղերի դուրս դալը:

Վորպեսզի չեղոքացվեն այդ խանդարիչ ուռուցքները և հնարա-
վորություն տրվի ըստմաթիվ դալար ճյուղերի զարգանալուն, պետք
է այդ ծերացած թթենիները լերիտասարդացնել:

Թթենու յերիտասարդացումը կատարվում է հետևյալ մեով. ա-
ռաջին հերթին պետք է կտրատել այն ճյուղերի ծալրերը, վորոնց վրա
ուռուցքներ կան: Յեթե, որինակ, թթենին ունի 24 հիմնական ճյուղ,
վորոնց ծալրերն այնքան ուռած են, վոր այլևս նոր ճյուղեր չեն դուրս
դալիս, պետք է կտրատել այդ հիմնական ճյուղերը, թողնելով նրա
տակը գտնվող 12 հիմնականները, իսկ յեթե վերջիններս ել անպետք
են, կարելի է լերիտասարդացնել՝ թողնելով 6 կամ 3 հիմնական ճյուղ:



Նկ. 11. Յերիտասարդացրած թթենին:

Այդ աշխատանքները պետք է կատարել աստիճանաբար, վոր-
պեսզի վերքերն ուժեղ չլինեն և ծառերը չթուլանան ու չփչանան:

Ուրեմն յերիտասարդացումը կատարվում են հակառակ ուղղությամբ, թթենու գազաթի ծալրից և աստիճանաբար իջնում են դեպի բունը:

Յերիտասարդացման ալդ աշխատանքները պետք է կատարել վաղ գարնանը՝ մինչև սննդանյութերի փոխանակության սկսվելը, նալած տարվա լեղանակներին՝ մարտի վերջերին կամ ապրիլի սկզբներին: Վերքերը պետք է ծածկել մածիկով:

Այդ տարին յերիտասարդ ճյուղերի տերևները չպետք է քաղել:

14. ԲԱՐՁՐԱՅՈՒՆ ԹԹԵՆԻՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿՐԿՆԱԿԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Հին բարձրաբուն թթենիները հարմարեցրած չեն կրկնակի կեքեկբուսների համար, ալդ իսկ պատճառով մինչև կրկնակի կերակրումների համար թփային թթաստաններ հիմնելը, հին բարձրաբուն թթենիները պետք է ոգտագործել այնպես, վոր կարճ ժամանակում բերքատվությունը չընկնի:

Գարնանը վորդին կերակրելու համար ոգտագործած ծառերի վրա դուրս յեկող նոր ճյուղերն ամռան և աշնան կերակրումների ժամանակ չպետք է կտրատել, այլ պետք է քաղել միայն տերևները — այն. ել ճյուղի ներքեից, ծայրերին թողնելով 4—5 հատ տերև:

Յեթե ամռան և աշնան կերակրումների ժամանակ կտրատենք յերիտասարդ վոստերը, հետևյալ գարնանն այլևս կերի ֆոնդ չենք ունենա: Բացի այդ, լեթե ամառը կտրատած ճյուղերի փոխարեն նոր վոստեր դուրս գան, ապա ալդ վոստորը ձմռան ցրտերին դիմացկուն չեն լինի, վորովհետև հնարավորութլուն չեն ունենա ժամանակին զարգանալու, այժառնալու և փայտանալու՝ ճյուղերի զարգացման տեղողության կարճության պատճառով:

15. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՔԵԼ ՏԵՐԵՎԸ ՇԵՐԱՄԻ ԿԵՐԻ ՀԱՄԱՐ

Շերամի կերի համար տերև հավաքելիս անհրաժեշտ է դիտենալ հետևյալ որենքները. —

1. Կտրատել միայն միամյա ճյուղերը:
2. Տերևը հավաքել արևը դուրս գալուց քիչ հետո, վարպեսզի նրա վրա գիշերվանից նստած ցողը չորանա:
3. Զպետք է հավաքել որվա տաք ժամերին, վորովհետև տերևը շատ շուտ փչանում է, թառամում և կերի համար անպետքանում:
4. Հավաքելիս չարորել:
5. Տերևը պահպանել զով շենքում, վորտեղ ողը մաքուր լինի:

6. Յեթե անձրևից թրջված ե, պետք ե հորացնել հով տեղում, վորեհ համապատասխան շենքում:

7. Հաժաքած տերեր խաւը նրով չի կարելի տեղավորել և չի կարելի ծածկել թանձր ծածկոցով: Այդպիսի պայմաններում տ'րերը շատ շուտ փշանում ե: Տերեր պետք ե պահել միանգամայն աղատ, բարակ շերտով փռած, վորպեսզի հով քամին չփի նրան:

8. Բարակ ճյուղերը կտրել սուր սեկատորով, իսկ հաստ ճյուղերն ալիքա աղոցով: Ճյուղերը լերերը չպետք ե կտրատել ձեռքով և կտրատել բռնի կացնով կամ սղոցով: Այդպիսի դեպքում ծառը հիվանդանում ե և րեր քաղովում թյունը պակասում:

9. Տերեհաժաքի աշխատանքները կատարել զգուշությամբ, հիմնական ճյուղերն ու բունը չվիրավորել և պահպանել գազաթի աղիդ ձևը:

10. Ճյուղի'րը կտրելիս, կտրվածքը ծածկել մածիկով:

Մածիկ պատրաստելու համար—

ա. Վերցնել մեկ մաս ծեծած կավիճ, մեկ մաս ոխրա, մեկ մաս ալիֆ, այդ նյութերը խառնել ալճքան, մինչև ստացվի թանձր նյութ: Այս մածիկով կտրելիս յե ծածկել և մեծ վերքերը:

բ. Իբրեւ ժամանակ լավ մածիկ կտրելիս յե գործածել նաև կավահողի ե կովի գոմաղբի հավասար խառնուրդը: Այս խառնուրդը գործ են ւածում նաև տնկիները տնկելու ժամանակ, արմատները թաթախելով ալճ շաղախի մեջ:

V. ԹԹԵՆՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՅՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Թթենիները մեծ մասամբ ցրտահարվում են վաղ գարնանը, գարնան սառնամանիքների ժամանակ, լերը բողբոջները բացվելիս՝ հանկարծ լեղանալիները ցրտում են: Կիսաբաց բողբոջները և նորածիլ վոստերը, վորոնք դեռ վերջնականապես չեն ամրացել, ժամանակավորապես դադարում են աճելուց և կամ բոլորովին ցրտահարվում են:

Ցրտահարվում են նաև աշնանը՝ վաղաժամ ցրտերից, յերբ սընկիների աճեցողությունը շարունակվում ե և նրանց մատաղ վոստերը դեռ փայտացած չեն լինում: Ձմռան շարունակ փչող ցուրտ ու չոր քամիներից նույնպես ցրտահարվում են չփայտացած բազմաթիվ վոստեր:

Ցրտահարված մասերը պետք ե կտրատել և վերքերը ծածկել մածիկով:

2. ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Թթինու բուժարաններին և տնկարաններին մեծ ֆինանսեր և հասցնում էր կարկուտը: Ուժեղ կարկաճաբուժյան դեպքում կոտորածովում են մատաղ վոստերը, թափվում են տերևները և վերքեր են առաջացնում կեղևի վրա: Ուժեղ կարկաճաբուժյան դեպքում, յեթե պնդիները վերափոխված են բնի ցածի մասերից, պետք և կարելի վերափոխ մասից, վորից նոր վոստեր դուրս կգա: Ընդհանրապես վիրավոր մասերը պետք և հեռացնել: Յեթե ծառի բնի վրա վերքեր են առաջացել, պետք և մաքրել վերքերը և ծածկել մածիկով:

3. ՊԱՐԱԶԻՏԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թթինները հիվանդանում են նաև կենդանական և բուսական պարազիտներից: Պարազիտային սունկերի շատ տեսակներ կան, վորոնցից մի մասը ֆլեսուում են տերևները, մյուսը՝ բուռը, հյուղերը, յերբորը՝ արմատները և այլն: Հաշված և, վոր թթինները հիվանդանում են մոտ 320 տեսակ սնկային-պարազիտային հիվանդութուններից: Բուսական պարազիտներից կանգ կառնենք 2 հիվանդութունների վրա, վորոնք առավել չափով ֆլեսուում են թթինում: Դրանք և՛ սերիի ժանգացավը յել արմատի փախսը:

ա. Ժանգացավ.—Ինչպես հիշեցինք, ժանգացավը տերևի հիվանդութուն և: Ժանգը տերևներին վրա յերևում և կլոր դորշագույն բծերով, բարակ դեղնավուն յեղրագծով: Սկզբում այս բծերը լինում են փոքր: Հետո աստիճանաբար մեծանալով՝ բռնում են մինչև անգամ ամբողջ տերևը:

Յեթե բծերը փոքր են և միջանի հատ, տերևը մասամբ ֆլեսում և կանաչ:

Ժանգացավով տերևները հիվանդանում են դլխավորապես աշնանը: Բայց յեթե չհղանակները լինում են առք ու տնծրակային, կամ թե ծառը վատ և սնվում, ժանգացալն ավելի շուտ և սկսվում: Նման դեպքերում, յեթե ալդ հիվանդությամբ վարակվում են դարնանը, տերևներն հենց ալդ ժամանակից ծածկվում են բծերով, վորոնք այնքան շատ են լինում, վոր տերևը շերտի կերի համար անպետքանում և: Հաճախ ուժեղ վարակված տերևները թափվում են, և ծառը միառժամանակ ֆլեսում և մերկ, մինչև նոր տերևներ տալը:

Այդ հիվանդության հետևանքով պակասում և տերևի բերքը:

Հիվանդության դեմ կարելի յե կռվել՝ ծառը բորդոյան հեղուկով

սրսկելով: Բայց նկատի ունենալով այն, վոր բարդույան հեղուկով սր-
բակված տերևները շերտի համար թառամվոր են, ուստի այդ մեթոդով
կռվելն անհնարին է:

Աշնանը թափված տերևները պետք է հավաքել և ալրել:

Բ. Արմատի փսայս.— Այս հիվան-
դությունն արմատավորում է հետևյալ
կերպ.— առանց աչքի ընկնող պատճառ-
ների, ծառն սկսում է չորանալ, տե-
րևները դեղնում են, և ծառն ամբող-
ջովին վռնչանում է: Թթենու ալս չո-
րացումը յերբեմն կատարվում է դան-
դաղ, յերբեմն էլ անքան արագ, վոր
բոլորովին առողջ թվացող ծառը մի-
ջանի որում կարող է վռնչանալ:

Այս հիվանդությունը լերում և
գլխավորապես այնպիսի տեղերում, ուր
հողը խոնավ է անքան, վոր ամենա-
տաք լեղատեղիներին անգամ արևի ճա-
ռագալիները չեն կարողանում գոլոր-
շիացնել հողի ներքին շերտերում լճա-
ցած ջրերը: Նույնպես և այնպիսի տե-
ղերում, ուր թթենիները չափից ափելի
յեն ջրվում:

Սեթե սևաւնամիւրենք թթենու ար-
մատները, կտեսնենք, վոր արմատները
ծածկված են սպիտակ ռորբոսով:

Ուրեմն, այդ հիվանդությունն առաջացնողը բորբոսասունկն է:
Աշնանը, թթենու արմատների մոտերը գետնի լերեսին յերևում են
գլխաբկասունկեր: Գլխաբկի ստորին կողմը գտնվում են սաղմնակի
թերթիկները, վորոնց վրա դարձանում են ապլմափոշիները: Այդ սաղմ-
նափոշիների միջոցով բազմանում և դարձանում է փտախտ հիվան-
դություն առաջացնող սունկը: Այս հիվանդության ամենավտանգավոր
կողմն ահն է, վոր բացի սաղմնափոշիներից բազմանալուց, արմատները
միջոցով հեշտությամբ անցնում և հաճախ ծառերին և վարձկում
նրանց: Այդ պատճառով էլ, լերը նկատվում է, վոր թթենուտանում
վորեւ ծառ հիվանդ է արմատի փտախտով, վորպեսզի արմատների մի-
ջոցով հարեան թթենիներն էլ չվարձկվեն, անմիջապես այս ծառը
պետք է չեղքացնել՝ իր շուրջը գտնվող առողջ ծառերից 2,5 մետր
հեռավորությամբ և 1,20—1,50 մետր խորությամբ տառներ բանալով:

Այնուհետև հիվանդ ծառն արմատաւորի պետք է տնել, հանել հողից



կկ. 13. Ժանդացավով վարձկված
թթենու տերև:

ընդ որ արմատները՝ չթողնելով անդամ մի փոքրիկ կտոր, և այլեւ
նույն տեղում միջանի տարի թթենի չպետք և տնկել:

Սնկերը վոչնչացնելու համար թթաստանի հողը պետք և լազ
մշակել, ավելորդ խոնավութունը չորացնել, չափավոր ջրել և ծառը
մաքուր պահել:

Ընդհանրապես թթենիները շատ խոնավութուն չեն սիրում և
պետք և անպես ջրել, վոր ջուրը կանգ չառնի առուններում, հողի ցած
մասերում և չճեղճանա:

ԱՌԱՋԱԲԱՆ

I. Թրեմինների նշանակությունը ժող. սննդամթերքի մեջ.

ա. Սիւս	4
բ. Թուղթ	4

II. Թրեմին լիվ բրասանների սննակները.

ա. Բարձրագույն թթենի	5
բ. Միջակ բույն ունեցող թթենի	5
գ. Ցածրագույն թթենի	5
դ. Թփային թթենի	5

III. Թփային բրասան. նրա առավելությունները.

1. Թթաստանի հողի ընտրութունը և մշակումն	6
2. Տնկիննր պատրաստելը	7
3. Թթենիները տնկելը	8
4. Թթաստանի խնամքը	9
ա. Վտուցումը	9
բ. Փխրացում	9
գ. Քաղհան	10
դ. Բուկ տալը	10
ե. Պարարտացում	10
5. Միջարքերի ոգտագործումն ալլ կուլտուրաներով	11
6. Թթենիներին ձև տալը	13
7. Բերքի քանակը	14
8. Տերևի ոգտագործումը զարնտն և աշնան կերակրումներէ ժամանակ	15

IV. Բարձրագույն սիսեմի բրասան.

1. Տնկարան. հողը պատրաստելը	16
2. Թթենիները տնկարանում տնկելը	16
3. Տնկի զարգացնելու առաջին տարին տնկարանում	17

4. ԹԹԵՆՈՒ զազաթի ձևավորումը տնկարանում, 2-րդ տարում	18
5. Տնկարանի խնամքը	19
6. ԹԹԵՆԻՆ մշտական թթաստանում տնկելը	19
7. ԹԹԵՆԻՆԵՐ տնկելը	20
ա. Բառակուսի ձևով	21
բ. Շախմատակ	22
8. Բարձրագույն ԹԹԵՆԻՆԵՐԻ զազաթի ձևավորումը և նրանց խնամքը	24
9. Բարձրագույն ԹԹԵՆԻՆԵՐԻ խնամքը	26
10. Ինչպես պետք է ետել ԹԹԵՆԻՆ	26
11. Բերքատվություն	27
12. Ինչպես պետք է պատրաստել ԹԹԵՆՈՒՆ՝ ձմեռելու համար	28
13. ԹԹԵՆԻՆԵՐԻ լերիտասարդացումը	28
14. Բարձրագույն ԹԹԵՆԻՆԵՐԻ ագտագործումը կրկնակի կերպ- կրուսների ժամանակ	30
15. Ինչպես պետք է հավաքել աներևը շերամի կերի համար	30

V. ԹԲԵՆՈՒ ՌԻՍԱՆԴՈՒՐՅՈՒՆՆԵՐ.

1. Ճրտահարություն	31
2. Կարկասահարություն	32
3. Պարազիտային հիվանդություններ	32
ա. Ժանգաղով	32
բ. Արմատի փտախա	33



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002545

114,

4166 40 4.

A $\frac{11}{23987}$